



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

” 12 ” մարտ 2011 թ.

թիվ 01-Ն

**ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
"21" մարտի 2011թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 60311141**

**ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ԱՊՐԻԼԻ 1-Ի ԹԻՎ 7(390) ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑՈՒՄ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ
ՀՐԱՀԱՆԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի ընթացքում գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակները կազմելու կարգի հրահանգը՝ համաձայն հավելվածի:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑՈՒՄ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ
ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի՝ **Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 1** (հավելված 1), ինչպես նաև դրանցում տնային տնտեսությունների ցուցակների՝ **Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 2** (հավելված 2), ձևաթղթերի (այսուհետև գյուղական համայնքների ցուցակների) կազմումը հանդիսանում է մարդահամարի նախապատրաստման հիմնական աշխատանքներից մեկը: **Այդ ցուցակների կազմման նպատակն է.**

- 1) ճշգրտել գյուղական համայնքների և բնակավայրերի ցանկը,
- 2) տնային տնտեսությունների ցուցակների հիման վրա սահմանազատել գյուղական համայնքների տարածքները համապատասխան մարդահամարային տեղամասերի (հաշվային, հրահանգչական, մարդահամարի),
- 3) ապահովել բնակչության հաշվառման ամբողջական ընդգրկումը,
- 4) բացառել կրկնակի հաշվառումը մարդահամարի անցկացման ընթացքում:

2. Գյուղական համայնքների ցուցակները (**Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 1**) կազմվում են երկու օրինակից՝ գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների կողմից, գյուղապետարաններում վարվող գյուղական համայնքներում տնտեսությունների հաշվառման **Ձև թիվ 1՝ «Համայնքի գրքի», Ձև թիվ 2՝ «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակի»** և **Ձև թիվ 3՝ «Այբբենական գրքի»** հիման վրա: Աշխատանքներն իրականացվում են մեկ ամսվա ընթացքում՝ սկսած 2011 թվականի մայիսի 1-ից:

3. Գյուղական համայնքների ցուցակներում՝ **Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 1**, գրառվում են գյուղական համայնքի տարածքում գտնվող բոլոր բնակավայրերը (ներառյալ առանց բնակչության կամ ժամանակավոր կացարան հանդիսացող բնակատեղերը):

4. Ժամանակավոր կացարան հանդիսացող, ինչպես նաև բնակչության ոչ մշտական կազմ ու ծառայողական նշանակություն ունեցող հիմնարկները (օրինակ՝ անտառապահի տնակներ, օդերևութաբանական կայաններ, կիսակայարաններ և այլն) գրանցվում են այն բնակավայրերի կազմում, որոնց հետ դրանք կապված են վարչականորեն կամ տարածքային առումով: Հիմնական բնակավայրի բնակելի տներից հեռու գտնվող տները կամ տների խումբը, որոնք տարածքային առումով հանդիսանում են տվյալ բնակավայրի մի մասը (օրինակ՝ հիվանդանոց, մեղվանոց, ամառանոցային տներ, աշխատողների տներ և այլն), ցույց են տրվում հիմնական բնակավայրի կազմում:

5. Գյուղական համայնքների ցուցակներում ներառվում են նաև այն ժամանակավոր կացարանները կամ տները, որոնք ցուցակները կազմելու պահին բնակեցված չեն եղել, սակայն մարդահամարի ժամանակ կարող են բնակեցված լինել (արհեստագործական խրճիթներ, անտառում բանվորական բարաքներ և այլն):

6. Գյուղական համայնքների ցուցակների մեջ չեն ներառվում տնտեսական նշանակություն ունեցող այն շինությունները, որոնցում նույնիսկ ժամանակավորապես մարդ չի կարող բնակվել (ամբար, հարդանոց, մարագ և այլն):

7. Գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակները լրացվում են ըստ **Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 2** ձևաթղթի:

8. Սույն հրահանգում օգտագործված հասկացությունները կիրառվում են միայն վիճակագրական նպատակով:

II ՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից, **Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 1** և **Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 2** ձևաթղթերը լրացվում են ղեկավարվելով գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակները կազմելու կարգի մասին սույն հրահանգով:

10. **Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 1**-ի հասցեամասում լրացվում են մարզի, այդ թվում՝ նախկին վարչական շրջանի՝ տարածաշրջանի, և

համայնքի անվանումները՝ համաձայն «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

11. Ցուցակում առանձին տողով գրառվում են տվյալ համայնքի վարչական կազմում ներառված բոլոր գյուղական բնակավայրերը: Հիմնական բնակավայրի (գյուղի) վարչական սահմաններում գտնվող այլ բնակատեղերը գրառվում են հիմնական բնակավայրից հետո: Ընդ որում, հիմնական բնակավայրի բնակելի տների և տնային տնտեսությունների քանակի, ինչպես նաև բնակչության թվաքանակի վերաբերյալ ցուցանիշներում պետք է ներառվեն նաև այդպիսի բնակատեղերի վերաբերյալ համապատասխան տվյալները:

Ձև թիվ 2 գյուղական-Աղյուսակ 1-ի

1) 1-ին սյունակում գրվում է գյուղական համայնքի սահմաններում վարչականորեն ներառված յուրաքանչյուր բնակավայրի (գյուղի) հերթական համարը:

2) 2-րդ սյունակում լրացվում է հիմնական գյուղական բնակավայրի սահմաններում գտնվող և նրա մասը կազմող յուրաքանչյուր այլ բնակատեղի (տան, տների խմբի) հերթական համարը:

3) 3-րդ սյունակում լրացվում է հիմնական բնակավայրի (գյուղի) ամբողջական անվանումը՝ համայնքի գրքում (Ձև թիվ 1) կատարված գրառումների համաձայն, ինչպես նաև այլ բնակատեղերի անվանումները/ կամ դրանց որևէ բնութագրիչ հատկանիշը (օրինակ՝ անտառապահի տնակ, Ա. Վարդանյանի տունը):

Բնակավայրի (գյուղի) անվանումն անհրաժեշտ է գրել ամբողջական, առանց կրճատումների, օրինակ՝ ոչ թե «Վ.Սասունիկ» այլ՝ «Վերին Սասունիկ»: Երկաթուղային կայարանները, կիսակայարանները և այլ բնակատեղերը գրառելիս անպայման պետք է նշել նաև դրանց անվանումը, իսկ եթե այն անվանում չունի, ապա հարկ է նշել, թե քանի կիլոմետր հեռավորության վրա է այն գտնվում հիմնական բնակավայրից, (օրինակ՝ «Բաժանք 102 կմ»): Մեկ համայնքում մի քանի միատիպ բնակատեղերի առկայության դեպքում, որոնք չունեն անվանումներ կամ անվանումները միատեսակ են (օրինակ՝ «անտառային պահակատներ»), ապա դրանք իրարից տարբերելու համար հարկավոր է նշել նաև տվյալ կետում բնակվողի անուն, ազգանունը:

4) 4-րդ սյունակում գրվում է գյուղական բնակավայրի հեռավորությունը (կիլոմետրերով) համայնքի կենտրոնից, իսկ այլ բնակատեղերի համար նշվում է այդ բնակատեղերի հեռավորությունն այն հիմնական բնակավայրից, որի վարչական սահմանում են գտնվում այդ բնակատեղերը:

5) 5-րդ սյունակում գրվում է յուրաքանչյուր հիմնական բնակավայրի (գյուղի), ինչպես նաև դրա տարածքում գտնվող այլ բնակատեղերի (տների), բնակելի շինությունների քանակն՝ ըստ համայնքի գրքի (Ձև թիվ 1) տվյալների:

Բնակելի շինությունների քանակում պետք է ներառել ինչպես այն տները, որոնցում ցուցակները կազմելու պահին բնակչություն չի ապրել, այնպես էլ կիսակառույց շինությունները:

6) 6-րդ սյունակում գրվում է տնային տնտեսությունների քանակը՝ ըստ համայնքի գրքերի, ընդ որում, հաշվառումից հանված և չհաշվառված տնային տնտեսություններն այդ քանակի մեջ չեն ներառվում:

7) 7-րդ սյունակում գրվում է համայնքի առկա (հաշվառված և ներկա, ժամանակավոր հաշվառված բնակչություն), ներառյալ ժամանակավոր բացակայող բնակչության թվաքանակն ըստ համայնքի գրքի (Ձև թիվ 1) և ժամանակավոր բնակավող անձանց ցուցակի (Ձև թիվ 2) տվյալների:

12. Ուսման մեկնած և ուսման վայրում բնակվող անձանց (անկախ բացակայելու ժամկետից) վերաբերյալ տվյալները մշտական բնակչության թվաքանակի մեջ չեն ներառվում:

13. Հիմնական բնակավայրին վերաբերող 5-7-րդ սյունակների տվյալները պետք է ներառեն նաև հիմնական բնակավայրերին ենթակա և ցուցակներում անմիջապես հիմնական բնակավայրից հետո գրառված այլ բնակատեղերի վերաբերյալ ցուցանիշները:

14. 8-րդ սյունակում գրվում է հիմնական բնակավայրի (գյուղի) տարածքում առկա հիվանդանոցների, հյուրանոցների, տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման հիմնարկների/ կազմակերպությունների, մանկատների, դպրոցներին կից գիշերօթիկների և գիշերօթիկ դպրոցների, տուրիստական բազաների, հանգստյան տների և նման այլ հիմնարկների/կազմակերպությունների հերթական համարները:

15. 9-րդ սյունակում գրվում է այդ հիմնարկի/կազմակերպության լրիվ անվանումը (առանց կրճատումների):

16. 10-րդ սյունակում գրվում է այդ հիմնարկում/կազմակերպությունում մշտական բնակվողների թվաքանակը, ներառյալ այնտեղ մշտապես բնակվող սպասարկող անձնակազմը:

17. 11-րդ սյունակում գրվում է այդ հիմնարկներում/ կազմակերպություններում առկա տեղերի (մահճակալների) քանակը:

18. 9-11-րդ սյունակները լրացվում են այդ հիմնարկների/ կազմակերպությունների վարչակազմի տվյալների հիման վրա:

19. Ցուցակի վերջում, որպես տեղեկանք առանձնացված տողի համապատասխան վանդակներում, լրացվում են նաև գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող բնակչության թվաքանակը (**Ձև թիվ 2**):

20. Ավարտելով գյուղական համայնքների ցուցակների լրացումը գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարը ստուգում է ցուցակներում բոլոր բնակավայրերի առկայությունը: Հիմնական գյուղական բնակավայրերի (գյուղերի) քանակի, (1-ին սյունակում գրանցված վերջին բնակավայրի համարը պետք է համընկնի տվյալ համայնքի տարածքում բնակավայրերի ընդհանուր քանակին), բնակելի տների, տնային տնտեսությունների, առկա՝ ներառյալ բացակայող բնակչության թվաքանակի, ժամանակավոր կացարաններում առկա տեղերի քանակի վերաբերյալ տվյալները համեմատվում են սկզբնական հաշվառման տվյալների հետ:

21. Հանրագումարները հաշվելուց և համեմատելուց հետո գյուղական համայնքի աշխատակազմի քարտուղարը ստորագրում է ցուցակը և այն հանձնում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետև ՀՀ ԱՎԾ) աշխատակազմի մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին՝ **մինչև 2011 թվականի հունիսի 1-ը**:

Սույն կետում նշված պատասխանատու անձը ստուգում է կազմված ցուցակների ճշգրտությունն ու ամբողջականությունը, դրանց համապատասխանությունը «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մարզի տվյալ համայնքի համար սահմանված բնակավայրերի ցանկի հետ, որից հետո ցուցակի մեկ օրինակը հանձնում է ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության ղեկավարին:

22. **Ձև թիվ 2 գյուղական - Աղյուսակ 2-ի** հասցեամասում լրացվում են մարզի, տարածաշրջանի և գյուղական համայնքի անվանումները:

Ձև թիվ 2 գյուղական –Աղյուսակ 2-ի

1) 1-ին սյունակում գրառվում են գյուղական համայնքներում բնակավայրերի (այդ թվում՝ դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի) տնային տնտեսությունների հերթական համարները:

2) 2-րդ սյունակում լրացվում է գյուղական համայնքի/գյուղական բնակավայրի կամ դրա տարածքում գտնվող այլ բնակատեղի լրիվ անվանումը՝ ըստ Աղյուսակ 1-ի:

3) 3-րդ սյունակում լրացվում է բնակելի միավորի հասցեն՝ առանց կրճատումների:

4) 4-րդ սյունակում լրացվում է տնային տնտեսության առաջինը գրված անձի/գլխավորի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը:

5) 5-րդ սյունակում նշվում է տնային տնտեսության անդամների ընդհանուր թվաքանակը՝ ըստ համայնքի գրքում (**Ձև թիվ 1**) կատարված գրառումների:

Ց ՈՒ Ց Ա Կ

Գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի

Մարզ ----- Տարածաշրջան----- Համայնք -----

1.	2.	3.	4.	5.			8.	9.	10.	
				5.	6.	7.			դրանցում	
									մշտական բնակչություն թվով	միտոցով

Տեղեկանք՝ համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող բնակչության թվաքանակը (մարդ)

Գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար -----
(ստորագրություն)

Ց ՈՒ Ց Ա Կ

Գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների

Մարզ ----- Տարածաշրջան----- Համայնք -----

	Գյուղական բնակավայրի/ դրա տարածքում գտնվող այլ բնակատեղի անվանումը	Բնակելի տան հասցեն	Տնային տնտեսության գլխավորի ազգանունը, անվան և հայրանվան սկզբնատառերը	Տնային տնտեսության անդամների թվաքանակը
1.	2.	3.	4.	5.

Գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար -----

(ստորագրություն)